ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 237 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԲԵՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 144,6Քմ/Մ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 26/12/2002թ. «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 4-րդ մասի, 73-րդ հոդվածի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ճանաչել քաղաքացի Բենիկ Մարտիրոսի Պողոսյանի սեփականության իրավունքը փաստացի ավել օգտագործվող 144,6քմ/մ մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ (կադաստրային ծածկագիր՝ 10-021-0024-0009):

2.Ավել օգտագործվող 144,6քմ/մ բնակավայրերի նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 3 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 238 Ա

ԽԱՉԻԿ ՀԱՅԿԱԶԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի բնակիչ Խաչիկ Հայկազի Աբրահամյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ Սոնիկ Կավկազի Աբրահամյանի (կինը), Արմեն Խաչիկի Աբրահամյանի (որդին), Մարատ Խաչիկի Աբրահամյանի (որդին), Զեփյուռ Խաչիկի Աբրահամյանի (դուստրը), Արմենուհի Խաչիկի Աբրահամյանի (դուստրը), Համասփյուռ Խաչիկի Աբրահամյանի (դուստրը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-044-0055-0009, մակերեսը՝ 0,14 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Քարագլուխ գյուղ, 3-րդ փողոց, տուն 26 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. դեկտեմբերի 3 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 239 Ա

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԱՐՏԵՄ ԵՆՈՔԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄ ԱՐԵԳՆԱԶԱՆ ԲԱԳՐԱՏԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի քաղվածքները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող հանգուցյալ Արտեմ Ենոքի Ասատրյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամ՝ հանգուցյալ Արեգնազան Բագրատի Ասատրյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0020-0002, մակերեսը՝ 0,084 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 11-րդ փողոց, տուն 4 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող հանգուցյալ Արտեմ Ենոքի Ասատրյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամ՝ հանգուցյալ Արեգնազան Բագրատի Ասատրյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0015-0015, մակերեսը՝ 0,074 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 11-րդ փողոց, թիվ 3 հասցեն:

3.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող հանգուցյալ Արտեմ Ենոքի Ասատրյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամ՝ հանգուցյալ Արեգնազան Բագրատի Ասատրյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0018-0020, մակերեսը՝ 0,115 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 4 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. դեկտեմբերի 4 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 240 Ա

ՀԵՆՐԻԿ ՅԱԽՇԻԲԵԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի բնակիչ Հենրիկ Յախշիբեկի Շահբազյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-044-0095-0006, մակերեսը՝ 0,093 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Քարագլուխ գյուղ, 6-րդ փողոց, տուն 3 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 5 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 241 Ա

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԶԱՔԱՐ ԼԵՎՈՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող հանգուցյալ Զաքար Լևոնի Միքայելյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ Թուխիկ Արսենի Ասատրյանի (կինը), Եթեր Զաքարի Միքայելյանի (աղջիկը), Լուսինե Զաքարի Միքայելյանի (աղջիկը), Էմին Զաքարի Միքայելյանի (որդին) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-044-0066-0004, մակերեսը՝ 0,056 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Քարագլուխ գյուղ, 17-րդ փողոց, տուն 3 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 5 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 242 Ա

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՐՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ՝ ՍԵՎԱԿ ԱՐՄԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին ենթակետով և 48-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի բնակարանային հարցերի հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 4-ի արձանագրությունը և Սևակ Արմանի Խաչատրյանի 12/11/2025թ. գրավոր դիմումը (մտից 1883)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայող Սևակ Արմանի Խաչատրյանին ճանաչել բնակարանի կարիքավոր և վերցնել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

1)Սևակ Արմանի Խաչատրյանն Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ վնասվածք է ստացել հակառակորդի հետ շփման գծում, հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով (ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչության պետ Ա. Ավետիսյանի կողմից 03/06/2025թ.-ին տրամադրված N 36/2821 տեղեկանքն, որն ուժի մեջ է անժամկետ):

2)Ներկա պահին Սևակ Արմանի Խաչատրյանի, նրա կնոջ՝ Մարիետա Արտակի Հարությունյանի և դստեր՝ Լուսե Սևակ Խաչատրյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի

24/06/2025թ. N ԱՏ-24062025-99-058 և 24/06/2025թ. N ԱՏ-24062025-99-059 տեղեկանքները):

2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով նախատեսված անհրաժեշտ տեղեկատվությունը, սահմանված կարգով և ժամկետներում, ուղարկել համապատասխան մարմիններին:

3.Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N1419-Ն որոշման 15-րդ կետի սահմանված կարգով և ժամկետներում՝ բնակարանային պայմանների բարելավման ենթակա շահառուների ամփոփ ցուցակներն ուղարկել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Եղեգիս համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 5 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 243 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 5-րդ կետի դ) ենթակետի 3-րդ պարբերությունով, 8-րդ կետի պահանջներով, 9-րդ կետի 1-ին պարբերությունով, 10-րդ կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» N 15-Ն հրամանի դրույթները, Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալի 14/10/2025թ. թիվ 113Ա կարգադրությունը, Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 29/09/2025թ. թիվ 203 հրամանը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց հերթական ատեստավորումն անցկացնել 2026 թվականի հունվարի 22-ին:

2.Հաստատել 2026 թվականի հունվարի 22-ին ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների ցուցակը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

3.Հանձնարարել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով կազմակերպել 2026 թվականի հունվարի 22-ին անցկացվելիք ատեստավորման նախապատրաստական աշխատանքները:

4.Աշխատակազմի քարտուղար Աննա Վանիկի Դանիելյանի ատեստավորմանը հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման համար լիազորված անձ նշանակել աշխատակազմի գլխավոր մասնագետ Գարեգին Եղյանին, իսկ մյուս համայնքային ծառայողների ատեստավորմանը՝ համաձայն Եղեգիս համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 15-ի թիվ 48Ա որոշման 3-րդ կետի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 5-ի Եղեգիս

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգիս համայնքի ղեկավարի
2025 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 243 Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմից 2026 թվականի հունվարի 22-ին ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների

ՀՀ	Ատեստավորման ենթակա համայնքային ծառայողի ազգանունը, անունը և հայրանունը	Զբաղեցրած պաշտոնը	Դասային աստիճանը	Պաշտոնի ծածկագիրը	Ատեստավորման եղանակը /փաստաթղթային, թեստավորման և հարցազրույցի/	Ատեստավորման անցկացման ժամը
1.	Դանիելյան Աննա Վանիկի	Աշխատակազմի քարտուղար	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան	1.2-1	Փաստաթղթային	10:00
2.	Օհանյան Մուրադ Սերյոժայի	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան	2.3-3	Փաստաթղթային	10:00
3.	Ոսկանյան Ռուբեն Սամվելի	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան	2.3-4	Փաստաթղթային	10:00
4.	Եղյան Գարեգին Լորիսի	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան	2.3-5	Թեստավորման և հարցազրույցի	11:00

5.	Սիմոնյան Արամ Երանոսի	Աշխատակազմի առաջատար մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան	3.1-2	Փաստաթղթային	10:00
6.	Իսկանդարյան Լիլիթ Սերգեյի	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան	3.2-6	Փաստաթղթային	10:00
7.	Խաչատրյան Թամարա Վաչիկի	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան	3.3-4	Փաստաթղթային	15:00
8.	Գրիգորյան Արշավիլ Պիլիպոսի	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան	3.3-6	Փաստաթղթային	15:00
9.	Եղոյան Վարդանուշ Մխիթարի	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան	3.3-9	Փաստաթղթային	15:00
10.	Մինասյան Լուսինե Ալբերտի	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան	3.3-10	Փաստաթղթային	15:00
11.	Մելքոնյան Նազիկ Սարիբեկի	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան	3.3-11	Փաստաթղթային	15:00

Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ